ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«12» ապրիլի 2010թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ԱՐՄԵՆ ԽՈՍՏԻԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ Արմեն Խոստիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Խորենացու 25ա հասցեում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող
աշխատանքների, առողջապահության, սոցիալական
պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Միքայել Դովլաթյան

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ԱՐՄԵՆ ԽՈՍՏԻԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ, Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի բազմավաստակ դերասան Արմեն Խոստիկյանի ծննդյան 80–ամյա հոբելյանը և նրա ավանդը հայ բեմարվեստում, ինչպես նաև բազմաթիվ հեռուստառադիոհաղորդումներում:

Տաղանդավոր դերասանը ինքնատիպ կերպարներ է կերտել նաև հայկական կինոյում, որոնք վառ են բոլորի հիշողություններում և շարունակում գրավել նաև երիտասարդ սերնդի ուշադրությունը:

Տեղեկանք–հիմնավորման համար հիմք է հանդիսանում նաև Արմեն Խոստիկյանի երկրպագուների թվով 50 ստորագրահավաքը:

Հարցը քննարկվել է Երևանի ավագանու կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի 2010թ. ապրիլի 1-ի նիստում և քվեարկության արդյունքում անցել միաձայն:

Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ՝ **Միքայել Դովլաթյան**